ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**No 08-Լ** **«11» մարտի 2024 թ.**

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՈԴՈՒԼԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ**

1. Հաստատել «Նախագծային ուսուցման հայեցակարգը և ուսուցիչների վերապատրաստման մոդուլը»՝ համաձայն Հավելվածի:

X

**ՆԱԽԱՐԱՐ՝** **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2024 թ.-ի _____
N_____Լ հրամանի

# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

(հայեցակարգի նախագիծ և ուսուցիչների վերապատրաստման մոդուլ)

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3
Ի՞նչ է նախագծի վրա հիմնված ուսուցումը ..... 3
Ընդհանուր բնութագրիչներ ..... 4
Առավելություններ ..... 5
Ի՞նչ է ուսումնական նախագիծը ..... 6
Մոտեցումներ ..... 7
Տեսակներ ..... 7
2. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ..... 8
Օրենսդրական հիմք ..... 8
Իրականացված աշխատանք ..... 9
3. ԻԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ..... 10
Համառոտ ակնարկ ..... 10
ԿՏԱԿ-ը՝ Իթվինինգի Աջակցող գործընկեր գործակալություն ..... 11
Հայաստանի դպրոցների մասնակցությունը և կուտակած փորձը ..... 12
4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ ..... 14
5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՊԼԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՍԱՆԴՂԱԿ ..... 17
6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՍԱՆԴՂԱԿ . 18
Նախագծին մասնակցություն ..... 18
Ներկայացման հմտություններ ..... 19
Գիտելիքների ստուգում ..... 20
7. «ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄՈԴՈՒԼ .... 21
Ներածություն ..... 21
Վերապատրաստման դասընթաց ..... 23

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Ի՞նչ է նախագծի վրա հիմնված ուսուցումը

Նախագծի վրա հիմնված ուսուցման համար հիմնականում կիրառվում են երկու

սահմանումներ.

1. Նախագծերի վրա հիմնված ուսուցումը ուսուցման մեթոդ է, որի ընթացքում սովորողները տևական աշխատանքի արդյունքում ձեռք են բերում գիտելիքներ և հմտություններ, ուսումնասիրում, վերլուծում և պատասխանում են արդիական և բարդ հարցի, խնդրի կամ մարտահրավերի:

2. Նախագծերի վրա հիմնված ուսուցումը դինամիկ մոտեցում է, որի ընթացքում սովորողները ակտիվորեն ուսումնասիրում են իրական աշխարհի խնդիրները և մարտահրավերները և ձեռք են բերում ավելի խորը գիտելիքներ:

Ընդհանուր բնութագրիչներ

Նախագծերի վրա հիմնված ուսուցումը (ՆՈ) ունի հետևյալ հիմնական բնութագրիչները.

ա/ ՆՈ-ն անդրադառնում է իրական և արդիական հարցերի, խնդիրների և/կամ մարտահրավերների՝ առանց դրանց լուծման կանխորոշված տարբերակի,

բ/ ՆՈ-ն պահանջում է անհրաժեշտ գիտելիքների իմացություն և հմտությունների տիրապետման մակարդակ,

գ/ ՆՈ-ն պահանջում է քննադատական մտածողություն, խնդիրների լուծում, համագործակցություն և հաղորդակցման տարբեր ձևեր,

դ/ դասավանդողը փոխում է իր դերը առավելապես հանդես գալով որպես մոտիվատոր, մոդերատոր և ֆասիլիտատոր,

ե/ սովորողները մասնակցում են խնդրի լուծմանը հասնելու գործընթացի նախագծմանը,

զ/ սովորողները պարբերաբար անդրադառնում են իրենց աշխատանքին, անդրադարձ են կատարում ստացված արդյունքներին (ռեֆլեկտիվ մոտեցում),

է/ վերջնական արդյունքի (պարտադիր չէ, որ նյութական լինի) գնահատումն իրականցվում է հստակ չափանիշներով (Հայեցակարգ, բաժին 6):

Առավելություններ

Ուսումնական նախագծի վրա հիմնված ուսուցման առավելություններն են. Ա/ Սովորողները սովորում են սովորել, մասնավորապես.

1. արդյունավետ ուսումնական նախագծերը խրախուսում են սովորողներին խորությամբ աշխատել խնդրի վրա, այլ ոչ թե համառոտ լուսաբանել բազմաթիվ թեմաներ, ինչը նպաստում է իրական գիտելիքի և փորձի կարևորության ընկալմանը:

2. Սովորողները ներգրավված են հստակ ժամանակացույցի կազմման աշխատանքներում, մասնավորապես, թե որքան ժամանակ է անհրաժեշտ խնդիրը լուծելու կամ նախագիծն ավարտելու համար, ինչը ձևավորում է ինքնահսկողություն և պատասխանատվություն:

Բ/ Ուսուցում ողջ կյանքի ընթացքում

Ուսումնական նախագծերի իրականացումը սովորողներին տալիս է այնպիսի գիտելիքի և փորձի ձեռքբերում, որը կիրառելի է նաև հետագա կյանքի ընթացքում և չի սահմանափակվում դասագրքից սովորելու պարզունակ ճանապարհով: Մասնավորապես համացանցում տեղեկատվության որոնումը, ինչպես նաև այդ տեղեկատվության ստուգումը և հետագա օգտագործումը հմտություններ են, որոնք մարդիկ օգտագործում են ողջ կյանքի ընթացքում, այդ թվում նաև աշխատավայրում:

Գ/ Ակտիվ ուսուցում

Մենք բոլորս, ինչպես և սովորողները, լավագույնս սովորում ենք «անելով»: Լավ մշակված ուսումնական նախագծում սովորողներն աշխատում են առավել գործնական. նրանք տեղեկատվություն են հավաքում տարբեր աղբյուրներից, հետազոտում են, ստեղծում են պրոդուկտ /արդյունք/, փորձարկում են: Սովորողներն առաջ են քաշում իրենց մտքերը և խնդրի լուծմանն ուղղված իրենց պատկերացումները, ինչպես նաև սովորում են որոշումներ կայացնել, հիմնավորել և պաշտպանել իրենց տեսակետը քննարկումների ժամանակ: Իրական մարդկանց, խնդիրների և մարտահրավերների հետ աշխատանքը սովորողների մոտ ձևավորում է պատասխանատվության զգացում և հստակ ավելացնում է նրանց մոտիվացիան է՛լ ավելի լայն ներգրավվածություն ունենալ ուսումնական նախագծի աշխատանքներին:

Դ/ Համագործակցային ուսուցում

Խրախուսում է սովորողների ակտիվ ներգրավվածությունն ու մասնակցությունը ուսումնական գործընթացում, ինչպես նաև սովորողների մոտ ձևավորվում է թիմային աշխատանքի, ինչպես նաև ընդհանուր պատասխանատվության գիտակցում:

Համացանցի առկայությունը սովորողներին հնարավորություն է տալիս նաև ակտիվորեն շփվել (նաև այլ երկրներում ապրող) իրենց հասակակիցների հետ անկախ հեռավորությունից, ինչպես նաև՝ դասավանդողների և փորձագետների հետ, յուրացնել այլ երկրների կրթական և մշակութային նվաճումները:

## Ի՞նչ է ուսումնական նախագիծը

Եվ այսպես. ի՞նչ է իրենց ներկայացնում ուսումնական նախագիծը, ի՞նչ մանկավարժական մոտեցումներ կան, քանի՞ հիմնական տեսակներ կարելի է առանձնացնել:

## Մոտեցումներ

Ներկայումս համաշխարհային մանկավարժական և գիտական գրականության մեջ կան տարբեր մոտեցումներ, որոնցից հիմնականը երկուսն են.

1. Ուսումնական նախագիծը ուսումնառության գործընթացի մասնակիցների համար որոշակի տևական ժամանակահատվածում առանձնապես ինքնատիպ արժեք ստեղծելու գործընթաց է:

2. Հանրակրթության ոլորտում ուսումնական նախագիծը համագործակցային աշխատանք է, որը մանրակրկիտ պլանավորված է ուսուցման որոշակի նպատակի հասնելու համար:

## Տեսակներ

Կրթության ոլորտում առանձնանում են նախագծերի հետևյալ հիմնական տեսակները.

1. Կառուցողական նախագիծ. Այս տեսակի նախագծերում կատարվում են գործնական առաջադրանքներ, ինչպիսիք են դպրոցական ջերմոցի կառուցումը, մոդելի պատրաստումը, ջրհոր կամ առու փորելը և այլն:

2. Գեղագիտական նախագիծ. Այս տեսակի նախագծում սովորողների կարողությունները զարգանում են երաժշտական ծրագրերի, բանաստեղծությունների և այլ մշակութային արժեքների ուսումնասիրման ու արժևորման միջոցով:

3. Մարտահրավերային նախագիծ. Այս տեսակի նախագծում զարգացնում է սովորողների՝ խնդիրներները բարձրաձայնելու, լուծմանն աջակցող առաջարկներ ներկայացնելու կարողությունը: Այն հիմնված է ճանաչողական մոտեցման վրա: Օրինակ, ինչպե՞ս վարել բանկային հաշիվ: Կամ ինչպես կարելի է նվազեցնել օդի աղտոտվածությունը համայնքում:

## 2. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Օրենսդրական հիմք

Ուսումնական նախագծերի իրականացմանը ներկայացվող պահանջը «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ»-ում սահմանված է «IX. ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ» բաժնում: Ուսումնական նախագծեր իրականացվում են չափորոշչով սահմանված պահանջներին համապատասխան և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված կարգով:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ուսումնական նախագծերի ոլորտը կարգավորվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ. փետրվարի 18-ի հ. 05–Լ հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգում» սահմանվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

ա/ Ուսումնական նախագիծը առանձին սովորողների կամ սովորողների փոքր խմբի կողմից որևէ ուսումնական առարկայի կամ ուսումնասիրվող որևէ օբյեկտի կամ երևույթի վերաբերյալ իրականացվող առարկայական կամ միջառարկայական հետազոտական աշխատանք է՝ նվիրված օրինաչափությունների, առանձնահատկությունների հետազոտմանը, արդյունքների ստացման և եզրակացությունների արձանագրմանը:

բ/ Ուսումնական նախագծերն իրականացվում են 7-12–րդ դասարաններում:

գ/ Սովորողի կողմից ուսումնական նախագիծը կարող է իրականացվել ինչպես մեկ ուսումնական առարկայի շրջանակում, այնպես էլ տարբեր ուսումնական առարկաներից՝ հետազոտության մեթոդների համադրմամբ միևնույն օբյեկտի և երևույթի, օրինաչափությունների կամ առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների հավաքման, համադրման, վերլուծության շրջանակում:

դ/ Հաստատությունը ուսումնական պլանի դպրոցական (ընտրովի) բաղադրիչից նախագծի իրականացման համար սահմանված կարգով տրամադրում է համապատասխան

ժամաքանակ:

ե/ Ուսումնական նախագծի իրականացման համար տրված ժամաքանակը Հաստատության կողմիցտարիֆիկացվում է: Միջառարկայական ուսումնական նախագծի դեպքում տարիֆիկացվում ենմասնակցող բոլոր առարկաների դասավանդողներին տրվող ժամաքանակները՝ մասնակցության տևողությունը համապատասխան:

զ/ Հաստատության սովորողների կողմից իրականացված ավարտուն ուսումնական նախագծերը գնահատվում և հրապարակվում են Հաստատության կայքում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ. փետրվարի 18-ի հ. 05–Լ հրամանն այստեղ՝ https://escs.am/files/files/2022-02-23/4a19fe51088ef68d9743c62d3eb90264.pdf:

Իրականացված աշխատանք

Հանրակրթության պետական չափորոշչի փորձարկման շրջանակներում, 2021-2022 ուսումնական տարում, ուսումնական նախագծեր են իրականացվել հիմնականում Տավուշի մարզի դպրոցներում, իսկ 2022-2023 ուսումնական տարում՝ Հայաստանի բոլոր հանրակրթական դպրոցների 7-րդ դասարաններում:

Նախագծերի իրականացման և դրանց արդյունքների մասին պլաններ, հաշվետվություններ, ցուցադրական նյութեր և տեսանյութեր են հրապարակվել ԿԶՆԱԿ–ի բլոգ–կայքում (https://kznakbnagavar.blogspot.com/) և «Հայկական կրթական միջավայր» պորտալի «Պաշարների շտեմարան» կայքում (https://lib.armedu.am/):

Բացի վերջին տարվա ընթացքում իրականացվող աշխատանքները, նախագծային ուսուցման ներդրման և կիրառման ուղղությամբ առանձին, տեղային աշխատանքներ կատարվել են եվրոպական դպրոցների համագործակցության Իթվինինգ ծրագրի շրջանակներում, Արարատյան բակալավրիատի, Կազա հիմնադրամի և առանձին առաջավոր դպրոցներում:

## 3. ԻԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

### Համառոտ ակնարկ

Հայաստանի 30 դպրոցների մոտ 100 դասավանդողներ 2013թ. սկսեցին աշխատել Եվրոպական միության Իթվինինգ ծրագրում: Այս ծրագրում աշխատանքն առավելապես իրենից ներկայացնում է համատեղ ուսումնական նախագծերի պլանավորում, մշակում և իրականցում: Ընդ որում, սկզբնական շրջանում, հայաստանցի դասավանդողները չէին կարող հանդես գալ որպես նախագծի համահիմնադիր, այլ միայն կարող էին միանալ արդեն պլանավորված և սկսված նախագծերին:

Իթվիննգ նախագծն առնվազն 2 տարբեր երկրներ ներկայացնող 2 դասավանդողներիհամատեղ պլանավորված և իրականացվող ուսումնական նախագիծ է, որն իր մեջ ներառում է թեմաներ մի քանի ուսումնական առարկաներից: Բացի այդ, քանի որ նախագիծը միջազգային է, իսկ արդյունքները հիմնականում ստեղծվում ու ցուցադրվում ենտարբեր առցանց մեդիա գործիքների օգնությամբ, նախագծի մասնակից սովորողների մոտ զարգանում է օտար լեզվով հաղորդակցվելու և մեդիա գործիքներով աշխատելու հմտություններ:

2017թ. սկսած մեր դասավանդողներն արդեն հնարավորություն ունեցան լիարժեք մասնակցել նախագծերի պլանավորման և ստեղծման աշխատանքներին: Փորձի կուտակմանը զուգահեռ սկսեցին իրականացնել վերապատրաստումներ՝ սկսնակ դասավանդողների համար:

Այս տարիների ընթացքում իրականացվել են հարյուրավոր նախագծեր, որոնց մի զգալի մասը արժանացել է Որակի ազգային և եվրոպական հավաստագրերի:

Որակի հավաստագիրը նախագծի գնահատման ճանաչողության ապացույցն է: Ազգային մակարդակում այն հավաստում է, որ մասնակիցը ստացել է բավարար միավորներ ըստ համաեվրոպական գնահատման սանդղակի: Իսկ Որակի եվրոպական հավաստագիրը վկայում է այն մասին, որ նախագիծը ստացել է առնվազն 2 ազգային հավաստագիր, որըն էլ իր հերթին ապացույցն է այն բանի, որ նախագծի իրականացման ընթացքում մասնակից տարբեր դասավանդողների և սովորողնեիր խմբերի միջև կատարվել է լավ համագործակցային աշխատանք:

Բացի հավաստագրումից, կա նաև ազգային և Եվրոպական մրցանակաբաշխություն,որին մասնակցում են Որակի եվրոպական հավաստագիր ունեցող նախագծերը:

## ԿՏԱԿ-ը՝ Իթվինինգի Աջակցող գործընկեր գործակալություն

eTwinning–ը եվրոպական դպրոցների էլեկտրոնային համագործակցության համայնք է, որտեղ մասնակից երկրների դասավանդողները և սովորողները, ինչպես անհատապես, այնպես էլ խմբերով կարող են գրանցվել և օգտվել Իթվինինգի առցանց գործիքներից, վիրտուալ միջավայրում հանդիպել միմյանց, իրականացնել գաղափարների և առաջավոր փորձի փոխանակում, ձեռք բերել թիմային աշխատանքի հմտություններ, զարգացնել օտար լեզուների և համակարգչային գիտելիքների իմացությունը, իրականացնել ուսումնական և այլ կրթական առցանց նախագծեր:

Հայաստանի դպրոցների պրակտիկ մասնակցությունը Իթվինինգին սկսվել է 2013թ. սկզբից, շուրջ 2.5 տարվա նախապատրաստական աշխատանքից հետո:

2013թ. հունվարին Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնում (ԿՏԱԿ) ստեղծվեց Իթվինինգ Պլյուս ծրագրի հայաստանյան Աջակցող գործընկեր գործակալությունը (ԱԳԳ):

Որոշ նախապատրաստական աշխատանքներից հետո (ԱԳԳ անդամների գրանցում, դպրոցների ընտրություն, գրանցում և այլն) 2013թ. մարտին 22 դպրոցներ Հայաստանի 7 մարզերից և Երևանից պաշտոնապես միացան Իթվինինգ Պլյուս ծրագրին:

Ստեղծվել և գործարկվում են ծրագրի մասին տեղեկատվություն ապահովող http://etwinningplus.armedu.am կայքը և https://www.facebook.com/eTwinningArmenia/ ֆեյսբուքյան էջը:

ԿՏԱԿ-ը, որպես Իթվինինգ Հայաստան ծրագրի ԱԱԳ, համակարգում է ծրագրում ընդգրկված դպրոցների և մասնագետների մասնակցությունը:

## Հայաստանի դպրոցների մասնակցությունը և կուտակած փորձը

Իթվինինգ Հայաստան ծրագրի շրջանակներում (ինչպես առցանց, այնպես էլ տեղերում) պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ, տարածաշրջանային հանդիպումներ, աշխատաժողովներ և ազգային խորհրդաժողովներ: Սեմինարների և աշխատաժողովների ընթացքում մասնակիցները բարելավում են իրենց գիտելիքները Իթվինինգ ծրագրի և դրա գործիքների մասին, կիսվում են փորձով ու առաջացած խնդիրների լուծման ուղիներով, սովորում են նոր և կրեատիվ ուսուցման մեթոդներ:

Տարվա ընթացքում կատարած աշխատանքը և ունեցած հաջողություններն ու ձեռքբերումները ներկայացնելու, լավագույն աշխատանքների հեղինակներինխրախուսելու նպատակով կազմակերպվում են տարեկան ամփոփիչ միջոցառումներ ու մրցանակաբաշխություններ, հայտարարվում «Եվրոպական դպրոցի», Որակի

հայաստանյան և եվրոպական հավաստագրերի արժանացած նախագծերն ու մասնակիցները (դպրոցներ, դասավանդողներ, աշակերտներ):

2014-2019թթ. Հայաստանում կազմակերպվել են նաև 6 միջազգային համաժողովներ, որոնց մասնակցել են Եվրոպական տարբեր երկրների և Հայաստանի հարյուրավոր դասավանդողներ և աջակցման ծառայությունների ներկայացուցիչներ: Այս համաժողովների մասնակիցները հնարավորություն են ձեռք բերում ունենալ նոր ծանոթություններ և իրականացնել համատեղ կրթամշակութային նախագծեր: Արտասահմանցի հյուրերը միջոցառման շրջանակներում ծանոթանում են նաև Հայաստանի պատմությանն ու մշակույթին:

2013-2019թթ. Հայաստանցի ավելի քան 100 դասավանդողներ մասնակցել են միջազգային ամենատարբեր սեմինարների ու վերապատրաստումների, ելույթներով ու առաջարկներով հանդես են եկել կոնֆերանսներին:

2020 թվականից, կորոնավիրուսային համավարակով պայմանավորված, միջազգային հանդիպումների ձևաչափը դարձել է առցանց:

2013-2023թթ. հայաստանցի դասավանդողների մասնակցությամբ իրականացվել է մոտ 1800 միջազգային ուսումնական նախագծեր: Այս նախագծերից ավելի քան 700-ում մերդասավանդողները հանդես են եկել որպես համահիմնադիրներ:

Իրականացվել են նաև ավելի քան 350 ազգային նախագծեր, որտեղ մասնակից բոլոր դասավանդողները ներկայացնում են մեկ երկիր՝ տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետությունը: Այս նախագծերի իրականցման արդյունքում, 165 դասավանդողներ ստացել են Որակի եվրոպական 600 հավաստագիր:

Մեր երկրի ներկայացուցիչները 2016թ. Որակի համաեվրոպական մրցույթում զբաղեցրել են 2-րդ հորիզոնականը միջին դպրոցական տարիքային խմբում, իսկ 2018թ. դարձել են նախադպրոցական և տարրական դպրոցական խմբի հաղթող:

Ամփոփելով Հայաստանի դպրոցների մասնակցությունը Իթվինինգ ծրագրին, կարողենք փաստել, որ այն օգտակար է և նպաստում է դպրոցական համագործակցության ընդլայնմանը, դասավանդողների և աշակերտների օտար լեզուների իմացությանը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ու թիմային աշխատանքի հմտությունների զարգացմանը, նոր և ստեղծագործական մեթոդներով կրթության իրականացմանը, ուսումնական նախագծերի իրականացման հմտությունների տիրապետմանը:

## 4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ուսումնասիրելով առկա իրավիճակը՝ օրենսդրական կարգավորումները և իրականացված նախագծերը, այդ թվում առկա նյութերն ու հրապարակումները, ունենալով Իթվինինգ ծրագրի շրջանակներում ձեռքբերված փորձը, առաջարկում ենք.

Ուսումնական նախագծերի համար սահմանել հետևյալ հիմնական պահանջները.

- Ուսումնական նախագիծը պետք է ունենա առարկայական ծրագրերի թեմատիկ բովանդակությունից բխող նպատակ, նկարագիր, պլանավորված գործողություններ, ակնկալվող վերջնարդյունք, ակնկալվող կանխորոշված տևողություն, կիրառվելիք ՏՏ գործիքներ, հնարավոր հետագա ազդեցություն և վերջնարդյունքի կիրառելիություն այլոց կողմից:
- Ուսումնական նախագիծը պետք է լինի գործողությունների ամբողջություն, այն պետքէ հստակ պլանավորվի և իրականացվի այնպես, որ որևէ առարկայի/ների/ շրջանակում իրականացվող ուսումնական նախագծի ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, հմտությունները և կարողություններն աջակցեն առարկաների ծրագրերի թեմատիկ բովանդակության յուրացմանը:
- Ուսումնական նախագծերը պետք է լինեն համագործակցային, այսինքն աշխատանքներին ցանկալի է մասնակցեն մեկից ավելի սովորողների

խմբեր, որոնք աշխատում են համագործակցային միջավայրում միևնույն խնդրի լուծման ուղղությամբ:

- 7-12–րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչները պետք է ծանոթ լինեն նախագծային ուսուցման մեթոդաբանությանը և ունենան տվյալ առարկայի թեմատիկ բովանդակությունից բխող ուսումնական նախագծի թեմայի առաջարկ: 7-12- րդ դասարաններում դասավանդող ուսուցիչը չի կարող հրաժարվել ուսումնական նախագիծ իրականացնելուց, եթե սովորողներն ընտրել են իր դասավանդած առարկան:
- Յուրաքանչյուր ուսումնական նախագծում միևնույն ուսումնական հաստատությունից կարող են ներգրավվել առավելագույնը 12 սովորողներ:
- Սովորողների խմբերը կարող են ներկայացնել ինչպես միևնույն ուսումնական հաստատությունը, այնպես էլ Հայաստանի հանրապետության մեկից ավելի ուսումնական հաստատություններ: Այս դեպքում մասնակից բոլոր ուսումնական հաստատությունները ներկայացնող դասավանդողները համատեղ կազմում են ուսումնական նախագծի պլան, ժամանակացույց, գործողություններ և այլն, որոնք հաստատվում և նույնությամբ կիրառվում են մասնակից բոլոր խմբերում:
- Դասավանդողները ներկայացնում են ուսումնական նախագծի պլանը համապատասխան մասնագիտական հանձնախմբում, որը քննարկում և հավանություն է տալիս համաձայն սույն հայեցակարգում սահմանված չափանիշների (Հայեցակարգի, բաժին 5): Ընդ որում, եթե որևէ չափանիշով պլանը գնահատվում է անբավարար, ապա այդ նախագիծը չի կարող հաստատվել: Եթե ուսումնական նախագծում ներգրավված են սովորողների խմբեր տարբեր ուսումնական հաստատություններից, ապա սույն կարգով քննարկվում և հավանության են արժանանում բոլոր ուսումնական հաստատություններում:
- Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար (օգոստոսին՝ 1-ին կիսամյակի, դեկտեմբերին 2–րդ կիսամյակի համար) դասավանդողները մասնագիտական հանձնախմբի քննարկմանն են ներկայացնում իրենց ուսումնական նախագծերի թեմաները:
- Ներկայացված թեմաների հիմա վրա՝ սովորողների կողմից

ընտրությունն իրականացնելուց հետո, համապատասխան առարկաների ուսուցիչները սովորողների մասնակցությամբ կազմում են ուսումնական նախագծի պլանները և ներակայացնում են հաստատման:

- Ուսումնական հաստատության ղեկավարը, հիմնվելով մեթոդական միավորման դրական եզրակացության վրա հաստատում է նախագծի պլանը և տարիֆիկացնում է պլանին համապատասան ժամաքանակը:
- Ուսումնական նախագիծը պետք է ուղղակիորեն կապված լինի ուսումնական թեմատիկ պլանի հետ՝ հանդես գալով որպես ուսումնական ծրագրի բաղկացուցիչ մաս, այլ ոչ թե որպես լրացուցիչ առաջադրանք և միտված լինի Հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված կարողունակությունների ձևավորմանը և առարկայական ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը:
- Կախված իր բարդությունունից՝ ուսումնական նախագիծը պետք է առնվազն ունենա 4 շաբաթ և 6 դասաժամ տևողություն՝ հստակ պլանավորված փուլերով:
- Ուսումնական նախագծին մասնակցող բոլոր սովորողները յուրաքանչյուր փուլի համար պետք է ունենան հստակ աշխատանքային բաժանում՝ անհատապես կամ խմբային աշխատանքի շրջանակներում, ինչպես նաև սովորողները անհատապես կամ խմբերով պետք է ինքնուրույն իրականացնեն գործնական, հետազոտական և վերլուծական աշխատանք՝ ուղղված սահմանված խնդրի կամ մարտահրավերի հաղթահարման համար տարբերակներ մշակելուն:
- Ուսումնական նախագծի արդյունքում պետք է ստեղծվի յուրօրինակ նյութական կամ ոչ նյութական արժեք, որը կիրառելի է այն խնդրի լուծման համար, ինչի շուրջ պլանավորվել և իրականացվել է տվյալ նախագիծը:
- Ուսումնական նախագծերի պլանավորումը, իրականացումը և վերջնարդյունքների հրապարակումը պետք է կատարվի որևէ առցանց համագործակցային միջավայրում (օրինակ՝ Ուսումնառության կառավարման e-school ազգային հարթակ, Հեռավար ուսուցման (Մուդլ) համակարգ, Իթվինինգ

պորտալ, «Պաշարների շտեմարան» կայք և այլն), որը պետք է հնարավորություն ունենա առանձին հաշիվներ ստեղծել և կառավարել՝ մասնակից բոլոր խմբերի բոլոր դասավանդողների համար, տեղադրել միջանկյալ և վերջնական արդյունքները, կազմակերպել քննարկումներ և առցանց հանդիպումներ:

- Նախագծի ղեկավարը ուսումնական նախագծի ավարտին, իրականացված աշխատանքի վերաբերյալ Հաստատության տնօրենին է ներկայացնում գրավոր հաշվետվություն: Հաշվետվության մեջ ներկայացվում են մասնակիցների ձեռք բերած կարողությունները, այն վերջնարդյունքները, որոնց ձևավորմանը նպաստել է ուսումնական նախագիծը, առաջարկություններ ծրագրի բարելավման մասին:

## 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՊԼԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՍԱՆԴՂԱԿ

Ուսումնական նախագծի պլանը հաստատվում է, եթե.

- ✓ Նշված է ուսումնական տարին, կիսամյակը,
- ✓ Շարադրված է ուսումնական նախագծի անվանումը,
- ✓ Նշված է ուսումնական նախագծի իրականացման տևողությունը/ամիս/,
- ✓ Նշված է նախատեսված ժամաքանակը,
- ✓ Շարադրված են ուսումնական նախագծի իրականացման փուլերը՝ համապատասխան ժամաքանակով,
- ✓ Շարադրված է ուսումնական նախագծի նպատակը,
- ✓ Շարադրված են ուսումնական նախագծի վերջնարդյունքները,
- ✓ Շարադրված են տվյալ առարկայի/ների այն թեմայի/ների/ վերջնարդյունքները, որից դուրս է բերված ուսումնական նախագծի թեման,
- ✓ Շարադրված է հիմնախնդիրը կամ մարտահրավերային հարցը
- ✓ Շարադրված են ուղղորդող հարցերը,

- ✓ Շարադրված է ուսումնական նախագծի նկարագիրը,
- ✓ Նշված է ուսումնական նախագծի ավարտուն արդյունքի /պրոդուկտի/ ներկայացման տեսակը և հետազոտության աղբյուրները:

## 6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՍԱՆԴՂԱԿ

Ուսումնական նախագծում ներգրավված սովորողների առավելագույն գնահատականը 10 միավոր է, որը բաշխված է հետևյալ չափանիշներում.

Ուսումնական նախագծում սովորողները գնահատվում են հետևյալ երեք չափանիշներով՝

1. Ուսումնական նախագծին մասնակցություն (4 միավոր)
2. Ներկայացման հմտություններ (2 միավոր)
3. Գիտելիքների ստուգում (4 միավոր):

Եթե նախագիծը իրականացվում է որպես քննություն, ապա նշված միավորները կրկնապատկվում են:

Նախագծին մասնակցություն

| | |
|---|---|
| 1 միավոր | • Մասնակցել է 1-2 հանդիպման և քննարկման:<br>• Չի ներգրավվել աշխատանքներին և չի կատարել իր առջև դրված խնդիրները:<br>• Չի համագործակցել թիմի անդամների հետ: |
| 2 միավոր | • Մասնակցել է առնվազն 3 հանդիպումների և քննարկումների:<br>• Չի ներգրավվել աշխատանքներին և դժվարացել է կատարել իր առջև դրված խնդիրները:<br>• Անարդյունավետ համագործացել է թիմի անդամների հետ: |
| 3 միավոր | • Մասնակցել է 5-6 հանդիպումների և քննարկումների:<br>• Ներգրավվել է աշխատանքներին և կատարել իր առջև դրված |

| | |
|---|---|
| | խնդիրները:<br>• Արդյունավետ համագործակցել է թիմի բոլոր անդամների հետ: |
| 4 միավոր | • Մասնակցել է բոլոր հանդիպումներին և քննարկումներին:<br>• Լիարժեք ներգրավվել է աշխատանքներին և կատարել իր առջև դրված բոլոր խնդիրները:<br>• Նախաձեռնել է արդյունավետ և նպատակային համագործակցություն թիմի բոլոր անդամների հետ: |

Ներկայացման հմտություններ

| | |
|---|---|
| 0.5 միավոր | • Սովորողի կողմից կատարված ուսումնասիրությունները չեն առնչվում հիմնախնդրին: Բացակայում է նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությունը:<br>• Սովորողի կողմից նյութը ներկայացվում է առանց որոշակի մշակման և միաբնույթ է:<br>• Սովորողի խոսքը կցկտուր է, ոչ լիարժեք և չի համապատասխանում բովանդակությանը: |
| 1 միավոր | • Սովորողի կողմից կատարված ուսումնասիրությունները մասամբ են առնչվում հիմնախնդրին: Նյութի շարադրանքում առանձին հարցեր անհասկանալի են:<br>• Սովորողի կողմից նյութը ներկայացվում է մշակված, սակայն միօրինակ:<br>• Սովորողի խոսքը սահուն է, հիմնականում համապատասխանում է բովանդակությանը, սակայն բացակայում են հիմնավորումները: |
| 1.5 միավոր | • Սովորողի կողմից կատարված ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին: Նյութի շարադրանքը տրամաբանական է, բաղկացուցիչ մասերը փոխլրացնում են իրար:<br>• Սովորողի կողմից ներկայացված նյութը բազմազան է, ներկայացված է քննադատական մոտեցմամբ: Առկա են հեղինակային գաղափարներ: |

| | |
|---|---|
| | • Սովորողի խոսքը սահուն է, համոզիչ և առկա են հիմնավորումներ,<br>բառապաշարի բազմազանությունը և արդյունավետ կիրառումը համապատասխանում է թեմային: |
| 2 միավոր | • Սովորողի կողմից կատարված ուսումնասիրությունները լիարժեք արտացոլում են հիմնարար հարցերը: Նախագծի բովանդակությունը հասկանալի է, տրամաբանորեն շարադրված, ընկալելի:<br>• Սովորողի կողմից ներկայացված նյութը բազմազան է, աշխատանքը աչքի է ընկնում յուրօրինակ մոտեցմամբ, տարբերվում է ինքնատիպ և ստեղծարար գաղափարներով:<br>• Սովորողի խոսքը սահուն է, համոզիչ, փաստարկված, պատկերավոր և հուզականորեն հագեցած: Բառապաշարի բազմազանությունը և արդյունավետ կիրառումը թեման դարձնում է առավել ներկայանալի և գրավում լսարանի ուշադրությունը: |

Գիտելիքների ստուգում

Գիտելիքների ստուգումը կազմակերպվում է նախագծի նախավերջին շաբաթում թեստի միջոցով: Թեստը պետք է կազմված լինի այնպես, որ համամասնորեն ներառված լինեն հարցեր, որոնք բխում են ուսումնական նախագծի պլանում շարադրված վերջնարդյունքերի տրամաբանությունից: Գիտելիքների ստուգումը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

7. «ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄՈԴՈՒԼ

Մոդուլի կառուցվածքը.

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
- ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ
  - Դասընթացի նպատակը
  - Դասընթացի բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները
  - Դասընթացի բովանդակությունը
  - Ակնկալվող վերջնարդյունքները:

Ներածություն

**Դասընթացի նպատակը**

Տեսական նյութերի հաղորդման և գործնական աշխատանքների իրականացման միջոցով .

- ուսուցանել նախագծային ուսուցում պլանավորելու և իրականացնելու սկզբունքները, քայլաշարը,
- ձևավորել գործնականորեն կիրառելի հմտություններ և կարողություններ նախագծերի և հետազոտական աշխատանքների վրա հիմնված ուսուցման կազմակերպման և իրականացման համար,
- ծանոթացնել նախագծերի իրականացման առանձնահատկություններին:

Դասավանդողների մասնագիտական պատրաստվածությամբ և հմտություններով է պայմանավորված, թե ինչպիսի կարողունակություններով օժտված քաղաքացիներ կձևավորվեն հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնառության ավարտին: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանովէ դասավանդողը կարողունակ գործընթացի պլանավորման, կազմակերպման, գիտելիքների փոխանցման հարցերում: Մանկավարժական գործունեությունը դասավանդողից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ զարգացում: Այս

դասընթացը միտված է նպաստելու դասավանդողի վերոնշյալ կարողությունների զարգացմանը:

**Վերապատրաստման դասընթացի ընդհանուր կառուցվածքը**

Դասընթացը կառուցվում է տեսական, գործնական և ինքնուրույն աշխատանքների համամասնական բաշխումով:

**Վերապատրաստման դասընթացի ընդհանուր ժամաքանակը**

Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 15 ժամ, որոնք ներառում են տեսական և գործնական առաջադրանքների կատարում:

**Կրեդիտներ**

Դասավանդողի կողմից հավաքվող անհրաժեշտ կրեդիտների քանակը:

Վերապատրաստման դասընթաց

| **Դասընթացի նպատակը** |
|---|
| Դասընթացի նպատակն է.<br>1) Զարգացնել մասնագիտական հմտությունները, ձևավորել կարողություններ ուղղված սովորողների ինքնուսուցմանն ու ինքնադրսևորմանը: |
| 2) Նախագծային ուսուցման գործընթացն ուղղորդել դեպի պլանավորած արդյունքների իրականացում:<br>3) Ձևավորել և զարգացնել ուսումնական նախագծերի ճիշտ պլանավորման կարողություններ՝օգտվելով հանրակրթական պետական չափորոշչային պահանջներից:<br>4) Ապահովել ակադեմիական գիտելիքի միջոցով՝ կարողունակություններ ձևավորող գործիքների ստեղծումը: |
| **Դասընթացի բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները** |
| Վերապատրաստման ծրագրով նախատեսված բովանդակությունը պետք է համապատասխանի գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիաների և մշակույթի ժամանակակից նվաճումներին, ունենա տրամաբանորեն իրար հաջորդող և փոխլրացնող բաժիններ:<br>Ծրագրի բովանդակությունը պետք է կառուցված լինի փուլային սկզբունքով՝ պարզից բարդ:<br>Պետք է ապահովի.<br>• մասնակիցների ակտիվության ու ինքնուրույնության սկզբունքը,<br>• գիտելիքների ու կարողությունների կիրառելիության սկզբունքը,<br>• դիրքորոշման և արժեհամակարգի ձևավորման սկզբունքը: |
| **Դասընթացի բովանդակությունը** |

| Բաժին | Թեմայի | Թեմայի նպատակը | Ժամաքանակ |
|---|---|---|---|

| | | | Տեսական | Գործնական |
|---|---|---|---|---|
| | բովանդակությունը | | | |
| Բաժին 1<br><br>(3 ժամ) | Ի՞նչ է նախագծայի նուսուցումը.<br>• Նախագծային ուսուսցման նպատակը<br>• Նախագծայի նուսուցման տեսակները<br>• Նախագծային ուսուցման փուլերը | ծանոթացնել գործնական աշխատանքներ և նախագծային ուսուցում պլանավորելու և իրականացնելու սկզբունքներին, քայլաշարին,<br><br>ձևավորել գործնականորեն կիրառելի հմտություններ նախագծային հետազոտական աշխատանքներ պլանավորելու և իրականացնելու համար | 3 | 0 |
| Բաժին 2<br>(2 ժամ) | Ուսումնառության կառավարման e-school ազգային հարթակ | միջավայրում նախագծերի տեղակայման ընթացակարգի և գործիքակազմի ներկայացում, փորձնական նախագծի տեղակայում (app.e-school.am) միջավայրում | 1 | 1 |
| Բաժին 3<br><br>(3 ժամ) | Նախագծերի գնահատման չափանիշներ | Ներկայացնել նախագծերի գնահատումը, դրանց չափանիշները և առանձնահատկությունները<br>ներկայացնել նախագծերի գնահատման սանդղակի յուրաքանչյուր միավորի բնութագրիչները | 2 | 1 |
| Բաժին 4 | Գործնական աշխատանք | ընտրել թեմա և ներկայացնել այդ թեմայով նախագծային ուսուցում իրականացնելու | 0 | 4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| (4 ժամ) | | պլան՝ կիրառելով ձեռք բերված հմտություններն ու կարողությունները | | |
| **Ակնկալվող վերջնարդյունքները** | | | | |
| Վերապատրաստման արդյունքում մասնակիցները՝<br>• Կկարողանան Հանրակրթական պետական չափորոշչով սահմանված, ինչպես նաև առարկայական ծրագրերում ներառված թեմաների առանձնահատկություններից ելնելով պլանավորել և իրականացնել նախագծերի վրա հիմնված ուսուցում:<br>• Ընտրել թեմա և ներկայացնել այդ թեմայով նախագծային ուսուցում իրականացնելու պլան՝ կիրառելով ձեռք բերված հմտություններն ու կարողությունները: | | | | |